

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հունիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (հետայսու՝ օրենք) լրացնել 11.1-րդ հոդված՝ հետեւյալ բովանդակությամբ՝

«Հոդված 11.1 Հայոց ազգային ինքնության տոն՝ նշվում է օգոստոսի 11-ին, իսկ դրան նախորդող 5 օրերին, օգոստոսի 6-11 (Նավասարդյան տոներ), որպես կանոն, կազմակերպվում են համահայկական միջոցառումներ (խորհրդաժողովներ, սպորտային, մշակութային եւ այլ բնույթի միջոցառումներ)»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հեղինակներ՝ [Վահան Հովհաննեսյան](#), [Լիլիթ Գալստյան](#), [Արա Նռանյան](#), [Արմեն Ռուստամյան](#), [Արծվիկ Մինասյան](#), [Արտյուշ Շահբազյան](#)